ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆ

Ոսկե մեդալով ավարտել է միջնակարգն ու գերազանց առաջադիմությամբ՝ Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը և ընդունվել պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետը: Աշխատել է ՀԼԿԵՄ Կենտկոմում և նվագակցել Հ. Զեֆիջյանի անսամբլում:

1970-73 թ. թ. սովորել է ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Մոսկվայի սոցիոլոգիական ինստիտուտի ասպիրանտուրայում, հաջողությամբ պաշտպանել դիսերտացիան և ստացել փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճանը:

Այժմ աշխատում է ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի էսթետիկայի բաժնում և դասախոսում պոլիտեխնիկական ինստիտուտում:

Նա 12 գիտական աշխատությունների և հոդվածների հեղինակ է: